թումը դարձել էր մեզ համար արտասահ-
ման. չկարողացայ անցնել Օսմանեան այդ
վիճակները. իսկ 1915 եւ 1916 ին որ-
պէս «Թիֆլիզի Լիստոկի» եւ «Մշակի» թղ-
թակից Ոլթիից անցայ Նարիման, Իդ, Թոր-
թում, Կիսկիմ, իջայ մինչեւ Արաթ եւ Թաֆթ
մարտկոցները (Թարխա). որոնց մասին գրել
եմ Армянскій Вестник հանդիսում
1915—1916 թ.: Այս մասին տես նոյնպէս
«Հայաստան» լրագիրը նոյն թւականներին,
որը հրատարակւում էր Թիֆլիզում Անդրա-
նիկի ղեկավարութեամբ:

1880—1881 թ. Կարսի հայկական դը-
պրոցում ուսուցիչ հրաւիրւելով ինձ յանձ-
նեցին պատմութեան եւ աշխարհագրութեան
դասերը, ինչպէս ընդհանուր, նոյնպէս եւ
ազգային: Ես պարտաւորւած էի յատկա-
պէս ուսումնասիրել այս առարկաները:
Հայերէն, ռուսերէն եւ ֆրանսերէն ամսա-
որ նիւթեր եմ հաւաքում: 1907 թ. Բաթում
որպէս գլի մի ընդհանուր ձեռնարկ կազմեմ
այս առարկաների մասին եւ 40 տարի է,
որ նիւթեր եմ հաւաքում: 1907 թ. Բաթում
կառավարում էի «Կարուց ընկեր». վաճա-
ռատունը եւ պատրաստում էի Պարիս գնա-
լու, որ Խրիմի պանտիկապեյից ձեռք
բերած հնութիւնները ծախեմ. (Տես Պա-
րիսում 1908 թ. ֆրանսերէն լեզւով հրատա-
րակած 2400 հնութիւնների կատալոգը):
Միանգամայն ծրագրում էի Բաթումի կալ-